ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2020 թվականի N 131-Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 199-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 115-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով,«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները և 2020 թվականի մայիսի 7-ի N 702-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «Ա» պարբերությունը՝

որոշում եմ.

1. «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 402183245 (չորս հարյուր երկու միլիոն հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 4055175 (չորս միլիոն հիսունհինգ հազար հարյուր յոթանասուն հինգ) ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 398128070 (երեք հարյուր իննսունութ միլիոն հարյուր քսանութ հազար յոթանասուն) ՀՀ դրամ:
2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 199-Ա որոշմամբ հաստատված «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 398128070 (երեք հարյուր իննսունութ միլիոն հարյուր քսանութ հազար յոթանասուն) դրամ, որը կազմում է 4418 (չորս հազար չորս հարյուր տասնութ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 90115 (իննսուն հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 4418 (չորս հազար չորս հարյուր տասնութ) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 115-Ա որոշումը:

03.06.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հունիսի 02
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2020 թվականի
հունիսի 02-ի N 131-Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

« 03 » 06 2020թ.

Կազմված է 02.06.2020թ. և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ - - -
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 05.09. 2007թ.
Գրանցման թիվ- 222.120.00769
Վկայական 03Ա 076979
ՀՎՀՀ 09420382
05.09.2007թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

« » ---------- 2020թ.

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. « ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 398128070 (երեք հարյուր իննսունութ միլիոն հարյուր քսանութ հազար յոթանասուն) դրամ, որը կազմում է 4418 (չորս հազար չորս հարյուր տասնութ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 90115 (իննսուն հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 4418 (չորս հազար չորս հարյուր տասնութ) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 05.09.2007թ.) բաղկացուցիչ մասը:

ք.Կապան-2020 թ.